ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
« 15 » հունվարի 2018 թ. **N 02/10.1/382-18**

AJV-01-02_2018-01-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-215-14.12.2017-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 3 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-215-14.12.2017-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներին հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվություն տալու կարգավորմանը վերաբերող համանման առաջարկություն ներկայացվել է նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից: Առաջարկը քննարկվել է սոցիալական գործընկերների, Աշխատանքի միջազգային կազմակերպության փորձագետների հետ և համաձայնեցված լուծումներով ներառվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում: Այն առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանանալուց հետո կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանը: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված նախագծով առաջարկվող փոփոխությունների ընդհանուր մոտեցումների և տրամաբանության ներքո տրվել են համապարփակ լուծումներ, դրա կարգավորումն առանձին նախագծով գտնում ենք ոչ նպատակահարմար և առաջարկում ենք առայժմ ձեռնպահ մնալ նախագծի քննարկումից ու դրա դրույթներին անդրադառնալ առաջիկայում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ներկայացվելիք օրենքի նախագծի քննարկումների շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունվարի 2018 թվականի N 3 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Թադևոս Ավետիսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-215-14.12.2017-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

2018 թ. հունվարի 11
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-215-14.12.2017-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 9-ի Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածը լրացնել նոր 4-րդ մասով.

«Անկախ գործատուի սեփականության ձեւից եւ կազմակերպաիրավական տեսակից, աշխատողների հաստիքները կամ թվաքանակը կրճատվելու, ինչպես նաեւ հավասար որակավորման կամ արտադրողականության դեպքում աշխատելու նախապատվությունը տրվում է՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի ընտանիքի անդամներին՝ ծնողին, կնոջը, երեխային, ինչպես նաեւ ընտանիքի անդամ հանդիսացող քրոջը եւ եղբորը, եթե նրանց ընտանիքում ինքնուրույն վաստակով այլ աշխատող չկա:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները

Գործող ՀՀ Աշխատանքային օրենսգրքում գործատուի կողմից աշխատողների հաստիքները կամ թվաքանակը կրճատվելու, ինչպես նաեւ հավասար որակավորման կամ արտադրողականության դեպքում, աշխատանքում մնալու նախապատվության չի նախատեսում հայրենիքի պաշտպանության համար զոհված կամ առողջությունը կորցրած՝ հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքի անդամների համար: Նման մոտեցումն արդարացի համարվել չի կարող, քանի որ զինծառայողի ընտանիքի անդամի աշխատանքը կորցնելու հետեւանքով ընտանիքը կարող է հայտնվել սոցիալական ծանր պայմաններում: Նման մոտեցումըն չի բխում սոցիալական, ինքնիշխան պետության, ինչպես նաեւ Ազգ-բանակ հայեցակարգի բովանդակությունից: Նման նախապատվության իրավունքի մասին օրինադրույթի բացակայությունն արդարացի դժգոհություն է առաջացնում հասարակության շրջանում:

Առաջարկվող լուծումները

Նախագծով առաջարկվում է գործատուի նախաձեռնությամբ աշխատողների հաստիքները կամ թվաքանակը կրճատելիս աշխատողների հավասար որակավորման կամ արտադրողականության դեպքում աշխատանքը շարունակելու նախապատվությունը տալ հայրենիքի պաշտպանության համար զոհված կամ 1-ին կամ

2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողի ընտանիքի անդամներին՝ ծնողին, կնոջը, երեխային, ինչպես նաեւ ընտանիքի անդամ հանդիսացող քրոջը եւ եղբորը, եթե նրանց ընտանիքում ինքնուրույն վաստակով այլ աշխատող չկա:

Ակնկալվող արդյունքները

Նախագծի ընդունման արդյունքում գործատուն աշխատանքը շարունակելու նախապատվությունը, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթին համապատասխան՝ կտրամադրի Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ կամ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի ընտանիքի անդամներին, որոնց համար կապահովվի աշխատանքից չզրկվելու՝ օրենքով երաշխավորված հնարավորությունը: